ԳԼՈՒԽ Է.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ. ԿՕԱԼԻՑԻԱՅԻ ԽԶՈՒՄԸ

Հայաստանի խորհրդարան

Մայիս 28-ի հանդէսները անցան ընդհանուր ոգևորութեան ու համերաշխութեան մթնոլորտում:

«Կեցցէ՛ Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստանը» գրում էր մեծատառ՝ ժողովրդականների «ժողովուրդ» պաշտօնաթերթը, իսկ մէկ օր յետոյ, Մայիս 28-ի աքտը անւանում էր «պետական յեղաշրջում», արդիւնք մինիստրական կազմի պատահական մեծամասնութեան»: «Այդ աքտը կունենար խոշոր բարոյական նշանակութիւն, գրում էր թերթը, եթէ նա յայտարարուէր պարլամենտի կողմից»: Ուրեմն, աքտի էութիւնը չէր յուզողը, այլ՝ ձևը — մի ձև, որ մշակւել էր և իրենց՝ ժողովրդականների մասնակցութեամբ:

Մի քանի օր անցած, Երևան վերադարձաւ Ս. Ցարուբիանեանը, որ Թիֆլիսումն էր և մայիսեան հանդէսներին չէր մասնակցել: Եւ այդ ժամանակ մէջտեղ եկաւ ժողովրդականների բողոքը ընդդէմ Մայիս 28-ի աքտի, որը, իբր թէ, չէր համապատասխանում հայ ժողովրդի շահերին: Ս. Ցարուբիանեանը հիմնաւորում էր իրենց տեսակէտը նրանով, որ Մայիս 28-ի աքտը կրում է միակողմանի բնոյթ, չունի Պօղոս Նուպար փաշայի հաւանութիւնը, չի բխում հայկական հարցի միջազգային կացութիւնից և, հետևաբար, պէտք է յայտարարուի չեղեալ: Նրան պատասխանում էին, որ յայտարարութիւնը պատրաստուած ու կատարուած է ամբողջ կառավարութեան, հետևաբար և ժողովրդական նախարարների հաւանութեամբ, որ Մայիս 28-ի յայտարարութեան տակ յօժար կամքով ստորագրել են և կառավարութեան ժողովրդական անդամները, որ հանդէսին նախագահողը նոյնիսկ ժողովրդական նախարար էր և որ, այդ բոլորից յետոյ, անտեղի է ինչ որ առարկութիւններ առաջ քաշելը: Բայց ժողովրդականները պնդեցին իրենց պահանջի վրա, որը նրանց պաշտօնաթերթ «ժողովուրդ»-ը (յունիս 4) հետևեալ կերպով էր ձևակերպում. «Միացեալ Հայաստանի պետական իշխանութիւնը պիտի կազմակերպւի Փարիզի գործադիր մարմնի և Հայաստանի հանրապետական կառավարութեան փոխադարձ համաձայնութեամբ: Պիտի ստեղծւի մի ժամանակաւոր խառն կառավարութիւն, որը պիտի դումարի Միացեալ Հայաստանի հիմնադիր ժողով, կամ պարլամենտ, եթէ մինչ այդ մշակւած լինի երկրի սահմանադրութիւնը: Ուրիշ կերպ լուծել